Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1066[2]-24.09.2016-ԳԲ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-159-Ն օրենքի 2-րդ հոդվածում լրացնել նոր 3-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3. Սույն օրենքի գործողությունը ընդերքօգտագործման թափոնների կառավարման եւ ընդերքօգտագործման թափոնների մշակման հետ կապված հարաբերությունների նկատմամբ տարածվում է այնքանով, որքանով չի հակասում Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված կարգավորումներին:»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2016 թվականի սեպտեմբերի 28-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ կատարված առաջարկությունների մասին

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության Բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ կառավարություն	1. «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 2-րդ հոդվածում ապահովել կետերի հաջորդական համարակալումը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջների: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ կետով լրացվող 38-րդ կետի 2-րդ պարբերությանը, 9-րդ հոդվածի կետերին, 16-րդ հոդվածով լրացվող 60.3-րդ և 60.4-րդ հոդվածների մասերին: Նույն հոդվածի 1-ին կետում «7-րդ» թվից հետո անհրաժեշտ է լրացնել «կետում» բառը, իսկ «վերամշակման» բառից հետո՝ «բառերը» բառը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ և 41-րդ հոդվածների պահանջների:	1. Ընդունվել է	«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 2-րդ հոդվածում ուղղվել է կետերի հաջորդական համարակալումները: Նույն հոդվածի 5-րդ կետով լրացվող 38-րդ կետի 2-րդ պարբերությունը միացվել է 1-ին պարբերությանը, ուղղվել է 9-րդ հոդվածի և 16-րդ հոդվածով լրացվող 60.3-րդ և 60.4-րդ հոդվածների մասերի հաջորդական համարակալումները: Նախագծի 2-րդ հոդվածում կատարվել է առաջարկվող փոփոխությունները:
	2. Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսվում է օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 37-47-րդ կետերով, մինչդեռ լրացվող 45-րդ և 46-րդ կետերը բացակայում են: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետին, որով նախատեսվում է լրացնել 15-26-րդ կետեր, մինչդեռ լրացվող 16-րդ, 17-րդ, 18-րդ և 24-րդ կետերը բացակայում են և առկա է 27-րդ կետ, որը նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետում չի հիշատակվում, ինչպես նաև նախագծի 6-րդ հոդվածին, որում բացակայում են լրացվող 10-12-րդ և 18-րդ կետերը, 16-րդ հոդվածին, որում բացակայում են 60.6-ից 60.8-րդ կետերը:	2. Ընդունվել է	2.Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ կետում ուղղվել է կետերի հաջորդական համարակալուները: Ուղղվել է նախագծի 5-րդ, 6-րդ հոդվածների կետերի և 16-րդ հոդվածով լրացվող հոդվածների հաջորդական համարակալումները:

	3. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետից անհրաժեշտ է հանել «առաջին պարբերությունում» բառերը, իսկ «բառերից» բառը փոխարինել «բառից» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ և 41-րդ հոդվածների պահանջները:	3.Ընդունվել է	3. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետից հանվել է «առաջին պարբերությունում» բառերը, իսկ «բառերից» բառը փոխարինել «բառից» բառով:
	4. Նախագծի 12-րդ հոդվածում «49-րդ կետի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «49-րդ հոդվածի» բառերով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջների:	4.Ընդունվել է	4. Նախագծի 12-րդ հոդվածում «49-րդ կետի» բառերն է փոխարինվել է «49-րդ հոդվածի» բառերով:
	5. Նախագծի 16-րդ հոդվածով լրացվող 60.11-րդ հոդվածի 2-րդ մասում անհրաժեշտ է ճիշտ նշել նախատեսված օրենքի վերնագիրը, մասնավորապես՝ «Վարչարարության և վարչական վարույթի մասին» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» բառերով:	5.Ընդունվել է	5. Նախագծի 16-րդ հոդվածով լրացվող 60.8 (նախկին 60.11) հոդվածի 2-րդ մասում «Վարչարարության» բառից հետո լրացվել է «հիմունքների» բառը:
	6. Նախագծի 16-րդ հոդվածով լրացվող 60.12-րդ հոդվածի 1-ին մասում «օրենսդրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով, որ խոսքը վերաբերում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքին:	6. Ընդունվել է	6. Նախագծի 16-րդ հոդվածով լրացվող 60.9 (նախկին 60.12) հոդվածի 1-ին մասում «օրենսդրությամբ» բառը փոխարինվել է «օրենքով» բառով:
	7. Նախագծի 16-րդ հոդվածով լրացվող 60.13-րդ հոդվածի 2-րդ մասում «գույքագրման» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «օբյեկտների» բառը՝ համաձայն նույն հոդվածի վերնագրի պահանջների:	7.Ընդունվել է	7. Նախագծի 16-րդ հոդվածով լրացվող 60.10-րդ (նախկին 60.13) հոդվածի 2-րդ մասում «գույքագրման» բառից առաջ լրացվել է«օբյեկտների» բառը:
	8. «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ նշել նախատեսված օրենսգրքի վերնագիրը, մասնավորապես՝ «Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով» բառերով:	8. Ընդունվել է	8. «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում «Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքով» բառերն փոխարինվել է «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով» բառերով:
	9. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը		

	համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը:		
	10.«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 16-րդ հոդվածով սահմանված գլուխ 5.1-ի հոդված 60.3-ի 1-ին մասի 6)-րդ կետի բ. ենթակետում նշված «հնարավորինս նվազագույնին է հասցնում» արտահայտությունը բնակչության առողջության անվտանգության տեսանկյունից անհասկանալի է, հաշվի առնելով, որ այս դեպքում նույնիսկ «նվազագույն» ազդեցությունը բնակչության առողջության տեսանկյունից կարող է նշանակել «փոքրաքանակ չվերականգնվող, անդառնալի հետևանքներ», որը անընդունելի է: Այդ պատճառով առաջարկում եմ խմբագրել «հնարավորինս նվազագույնին է հասցնում» արտահայտությունը այնպես, որ բացառվի ազդեցությունը բնակչության առողջության վրա:	1.Ընդունվել է	1. Նախագծի 16-րդ հոդվածով լրացվող 60.3-րդ հոդվածի 1-ին մասի 6)-րդ կետի բ. ենթակետը խմբագրվել է:
	11.«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում՝ 11.1 8-րդ հոդվածից հանել կրկնվող «ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և» բառերը. 11.2 16-րդ հոդվածով օրենսգիրքը լրացվող 5.1-ի գլխում՝ 1) 60.1 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «բնության հուշարձանների» բառերը փոխարինել «բնության հատուկ պահպանվող տարածքների» բառերով. 2) 60.3 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետը, 60.10 հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 5-րդ կետերը, 60.11 հոդվածի 2-րդ մասը լրացնել «բուսական, կենդանական աշխարհի» բառերով. 3) հստակեցնել 60.3-րդ հոդվածի 8-րդ մասը, քանի որ նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված է «19) ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության դասակարգման կարգի սահմանումը».	1.Ընդունվել է 2.Ընդունվել է	1.Նախագծի 8-րդ հոդվածից հանվել է կրկնվող «ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և» բառերը: 1. 1-2)Նախագծի 60.1 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 60.3 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետում, 16-րդ հոդվածով լրացվող 60.10-րդ (նախկին 60.7) հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերում և 60.11 (նախկին 60.8)հոդվածի 2-րդ մասը մասում կատարվել է համապատասխան փոփոխություն: 3) 60.3-րդ հոդվածի 8-րդ մասը խմբագրվել է, այն համապատասխանեցվել է 5-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված է <16 (նախկին 19) կետին:

	4) 60.11-րդ հոդվածի 3-րդ մասը «պահպանման» բառից առաջ լրացնել «օբյեկտի» բառով.		4) նախագծի 60.8-րդ (նախկին 60.11) հոդվածի 3-րդ մասը «պահպանման» բառից առաջ լրացվել է «օբյեկտի» բառով: